«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Որոշ կարողունակությունների ձևավորումը սովորողների մոտ «Պատմություն» առարկայի դասավանդման ժամանակ
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Տաթևիկ Պողոսյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԿԳՄՄՆ <<Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց>> ՊՈԱԿ
ՂԵԿԱՎԱՐ	մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր, Ա.Մ. Ծատուրյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն…….....…. 2

Գլուխ 1. Սովորողների մոտ որոշ կարողունակությունների ձևավորումը պատմության դասերին:

1.1 Կարողունակությունների դերը ուսուցման գործընթացում.....….. 6

1.2 1.2 Սովորել սովորելու կարողունակության և ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորումը սովորողների մոտ պատմության դասերին .....……. 7

Եզրակացություն…….....……13

Գրականություն…….....…… 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. Այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:

Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ:



Գծապատկեր 1.

Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է (գծապատկեր 1), և դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառացած խնդիրները:

Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Վերջինիս ձևավորումն անընդհատ գործընթաց է, որի ժամանակ այն անընդհատ կարող է կատարելագործվել: Կարողունակությունների ձևավորումը սկսում է վաղ մանկությունից, շարունակվում է դպրոցում և ամբողջ կյանքի ընթացքում:

Միջնակարգ կրթության կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունները

2021 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվել են միջնակարգ կրթության հետևյալ ութ կարողունակությունները.

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,
2) սովորել սովորելու կարողունակություն,
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5) թվային և մեդիա կարողունակություն,
6) մշակութային կարողունակություն,
7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
8) տնտեսական կարողունակություն:[5]

Արագ փոփոխվող կյանքը, գիտության և տեխնիկայի շարունակական աճը մասնագետներից պահանջում էին աշխատանքային շուկային արագ հարմարվելու ճկունություն: Ամերիկյան հետազոտողները պարզեցին, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը մասնագիտական գործունեության ժամանակ մնում է չիրացված: Այդ ժամանակներում լայն տարածված IQ թեստերը, որոնցով չափում էին մարդու իմացական մակարդակը, չէին երաշխավորում նրա մասնագիտական հաջող

գործունեությունը: Թեստը տալիս էր բարձր արդյունք, մինչդեռ իրական կյանքում մարդը ցածր արդյունավետությամբ էր աշխատում:

Ամերիկացի հետազոտողները կատարեցին բարձր արդյունավետության հասած մարդկանց վարքի, գործունեության ուսումնասիրություններ և ձևակերպեցին նրանց ընդհանրությունները միավորող որակների համալիր խումբ, որն անվանեցին **կոմպետենցիա:**[6]

Արդիականությունը-Արդի ժամանակներում նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումը և հմտությունների ձևավորումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է հանրակրթության նպատակների առավել լայն գիտակցում:

Գործնական նշանակությունը-Հանրակրթական համակարգին նոր պահանջներ թելադրելը գործարար շրջանակների կողմից առաջացրեց հատկապես աշխատանքային շուկայի կառուցվածքի փոփոխության: Պարզ է դարձել, որ հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի արագ փոփոխվող հասարակությունում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը: 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպատակաուղղված կրթական ծրագրեր սկսեցին կառուցել արագ զարգացող նորարարական տնտեսություններ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ֆինլանդիան, Ավստրալիան, ԱՄՆ-ի առանձին նահանգներ, Կանադան, Հարավային Կորեան, Շոտլանդիան, Իռլանդիան, Սինգապուրը: Ավելի ուշ այդ շարժմանը միացան Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան, Հոլանդիան, Լատինական Ամերիկայի և հետխորհրդային երկրները: Հետևելով զարգացման ընդհանուր միտումներին՝ յուրաքանչյուր երկիր, ելնելով իր մշակութային, պատմական, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական առանձնահատկություններից, այդ ուղղությամբ շարժվում է իր նախընտրած ճանապարհով:

Չնայած այս հարցում միասնական մոտեցումը բացակայում է, սակայն մի բան հստակ է՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն իր դիրքերն արագորեն զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին: Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում նեղ առարկայական գիտելիքներից և գործնականում դրանք կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր է նսկսում խաղալ

համապիտանի կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր:

Նպատակը.

Աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես կարելի <<Պատմություն>> առարկայի դասավանդման ժամանակ սովորողների մոտ ձևավորել որոշ կարևոր կարողունակություններ:

Այդ նպատակով խնդիր է դրվել ուսումնասիրվել կարողունակությունների դերը ուսուցման գործընթացում վեր է լուծվել սովորել սովորելու կարողունակություն, ինչպես նաև ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության նկարագրիչները:

Խնդիրները.

1. Կարողունակությունների վրա հիմնված ուսուցումը կարևորում է այն, որ սովորողները կարողանան կիրառել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները նոր համատեքստերում, կարողանան հմտորեն լուծել առաջացող խնդիրները:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը կազմված է ներածությունից, 1 գլխից, որը բաժանվում է երկու ենթագլուխների, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

Սովորողների մոտ որոշ կարողունակությունների ձևավորումը պատմության դասերին

1.1 Կարողունակությունների դերը ուսուցման գործընթացում

Կարողունակությունները ձևավորվում են ուսումնական գործունեության տարատեսակ ձևերի, ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունքում: Առավել արդյունավետ կարող են լինել ուսումնական գործունեության այնպիսի ձևերը, ինչպիսիք են՝ նախագծային աշխատանքը, հետազոտությունը, բանավեճը, ուսումնական ֆիլմերի դիտումը և քննարկումը, էքսկուրսիաները, սեմինարները, դպրոցական գիտաժողովները, ներկայացումները և այլն:

Բացի այն ամենից, ինչ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է անել կոնկրետ առարկայական ծրագրի շրջանակներում՝ մի քանի առարկաների ուսուցիչների համագործակցությունը կարող է հանգեցնել կոմպետենցիաների զարգացման արժեքավոր և արդյունավետ լրացուցիչ արդյունքների: Այսպիսի համագործակցությունը կարող է տեղ գտնել ինչպես նույն դասարանի, այնպես էլ տարբեր դասարանների հետ աշխատող ուսուցիչների միջև:

Նույն դասարանի հետ աշխատող տարբեր առարկաների ուսուցիչները կարող են դասի պլանը կազմել այնպես, որ, համագործակցելով և փոխլրացնելով միմյանց, առավելագույնս նպաստեն այս կամ այն կարողունակության ձևավորմանը: Դրա արդյունքում դասարանը բոլոր առումներով աստիճանական առաջընթաց կունենա, իսկ ուսուցիչները կխուսափեն մասնակի համընկնումներից և կրկնություններից: Ուսուցիչները կարող են միասին պլանավորել նախագծային ուսումնառության աշխատանքներ կամ այնպիսի փոխհատվող թեմաներ, ինչպիսիք են, օրինակ, մարդու իրավունքները, կայուն զարգացումը, բռնության կանխարգելումը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն:

1.2 Սովորել սովորելու կարողունակության և ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորումը սովորողների մոտ պատմության դասերին

Պատմության դասաժամերը հնարավորություն են տալիս սովորողների մոտ ձևավորելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ կրթության շրջանավարտներին ներկայացվող ութ կարողունակություններից որոշները:

Այս աշխատանքում կանդրադառնանք սովորել սովորելու և ժողովրդավարական ու քաղաքացիական կարողունակությունների ձևավորմանը :

Սովորել սովորելու կարողունակությունը թույլ է տալիս ձեռք բերել, մշակել և յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև ուղղորդել և կողմնորոշել դրանք փնտրելու և պրակտիկ կյանքում օգտագործելու կարողություններ: Սովորողները այս կարողունակության ձևավորման արդյունքում կարողանում են ինքնուրույն կազմակերպել իրենց ուսումը, գնահատել իրենց աշխատանքը և անհրաժեշտության դեպքում խորհուրդ, տեղեկատվություն և աջակցություն են փնտրում: Ուսուցիչը հանդես է գալիս խորհրդատուի դերում:

Սովորել սովորելու կարողունակության նկարագրիչները

Գիտելիք՝

- ուսումնառության նախընտրած ռազմավարությունների իմացություն,
- կրթական կարիքների մասին գիտելիքներ,
- ուսուցման տեսությունների իմացություն,
- ուսումնառության և անձնական զարգացման ժամանակակից մոտեցումներ,
- կրթական համակարգի հնարավորությունների, առանձնահատկությունների, սահմանափակումների իմացություն,
- որտեղ և ինչպես գտնել հնարավորություններ, նյութեր և աջակցություն ուսումնառության գործընթացներում,
- ուսուցման արդյունավետության բարձրացման մեթոդներ,

- կարողությունների ինքնագնահատում, դրանց հիման վրա զարգացման ծրագրերի մշակում:

Հմտություններ՝

- սեփական կարողությունները բացահայտելու,
- բարդությունների հետ առնչվելու, քննադատաբար ինքնավերլուծելու նորոշումներ կայացնելու,
- ինչպես համատեղ, այնպես էլ ինքնուրույն աշխատելու, ուսման արդյունքները գնահատելու և կիսվելու, անհրաժեշտության դեպքում աջակցություն փնտրելու,
- սոցիալական փոխհարաբերություններն արդյունավետ կառավարելու,
- համատեքստը վերլուծելու և սեփական կրթական կարիքները բացահայտելու, կրթական նպատակներ և խնդիրներ սահմանելու,
- սեփական ուսումնառության գործընթացն արդյունավետ և որակյալ կազմակերպելու, խոչընդոտները հաղթահարելու,
- անձնական և մասնագիտական աճը կառավարելու, արտաքին հնարավորություններն արդյունավետ օգտագործելու,
- տարբեր համատեքստերում գիտելիքներն ու հմտությունները կիրառելու,
- ուսման և կյանքի փորձի հիման վրա սեփական կարիերայի աճի հեռանկարներն ու ուղենիշները կանխատեսելու և նախագծելու:

Դիրքորոշում /արժեք՝

- մարդու անձնական, սոցիալական և ֆիզիկական զարգացման, աճի կարևորության գիտակցում,
- ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք,
- ողջ կյանքի ընթացքում սովորելու գործունեություն ծավալելու, հաջողության հասնելու գիտակցում և ձգտում,
- անընդհատ կրթության ներուժի կարևորության ու արժեքի ընկալում,

- Անհաջողությունը վերլուծելու պատրաստակամություն, շարունակական անհատական աճի և զարգացման հնարավորության գնահատում,
- Ուսումնառության արդյունքները կյանքի տարբեր համատեքստերում կիրառելու հետաքրքրասիրություն:

Սովորել սովորելու կարողունակությունը կապված է անձի՝ ինքն իրեն որպես սովորող ընկալելու, սեփական փորձը կառուցելու, անձնական կրթական նպատակներ և խնդիրներ սահմանելու, զարգացման հետագծեր մշակելու և դրանց հետևելու ունակության հետ:

Այս կարողունակությունը ներառում է սեփական ուսումնառության կարիքների, առանձնահատկությունների, նախապատվությունների, բարդությունների, աջակցող մեխանիզմների գիտակցում, առկա հնարավորությունների և ռեսուրսների իմացության հիման վրա սեփական անձնային և մասնագիտական զարգացման երկարաժամկետ ռազամավարություն և քայլեր մշակելու կարողություն:

Այն ներառում է նաև կյանքի տարբեր իրավիճակներում կենսափորձի վերլուծության, արդյունքների կիրառման կարողություն և ցանկություն, զարգացման հնարավորությունների որոնում, ուսումնառության առանձնահատկությունների, նախընտրելի ոճերի, արդյունավետության գրավականների, օգնող կամ խանգարող միջավայրի, գործոնների իմացություն և բացահայտում:

Այն պահանջում է սեփական կրթական բացերի ու կարիքների բացահայտման գործիքների իմացություն, ձեռքբերումների ամրագրման ունակություն, ինքնագնահատում, ուսուցողական գործընթացի վրա ազդող գործոնների գիտակցում, ուսումնառության հնարավորությունների, աղբյուրների իմացություն և ներգրավման պատրաստակամություն, կարիքահեն ուսուցման պլանավորման ունակություն, սեփական ուսումնական նվաճումների ճանաչման գործիքների իմացություն, ցկյանս կրթության մոտիվացվածություն և իմաստի գիտակցում, սեփական ուսումնական գործընթացի համար պատասխանատվության ստանձնում, ուսումնառության արդյունավետ ձևերի, գործիքների իմացություն և կիրառում:

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն- Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության զարգացումը սովորողի դաստիարակության կարևորագույն դրույթներից մեկն է, այն տվյալ երկրի քաղաքացու կրթությունն ու

դաստիարկությունն է, ով ճանաչում է իր հայրենիքը, պատրաստ է պաշտպանել ու զարգացնել իր պետությունն ու ազատությունը, իսկ պատմության դասաժամերը ամենալայն հնարավորություններն են ստեղծում սովորողների մոտ նման որակների ձևավորման համար:

Ժողովրդավարական և քաղաքացիականկրթությունը սկսվում է վաղ մանկությունից՝ ծնողների պատմություններով պատմության, մշակույթի, ազգային ավանդույթների, բնության և իրենց պետության ձեռքբերումների մասին: Անհրաժեշտ է անձնական օրինակով երեխաների մոտ սերմանել հարգանք ու հպարտություն հայրենիքի նկատմամբ, իրենց երկրի ճակատագրի համար պատասխանատվությունը, ազգային ավանդույթների նկատմամբ սերն ու հարգանքը դիտարկել այլ ազգերի և մշակույթների իմացության համատեքստում: Իսկ այն ավելի է ամրապնդվում դպրոցում՝ պատմության դասաժամերին, երբ ծանոթանալով սեփական երկրի և համաշխարհային պատմությանը՝ սովորորողները ավելի խորն են սկսում ընկալել հայրենիքն ու աշխարհը:

Սովորողի մոտ ժողովրդավարական և քաղաքացիական կրթության ժամանակակից մեթոդները սկսվում են տնից, դպրոցից, դասընկերների և ուսուցիչների հանդեպ հարգանքից, իր տեսակի պատմության, բնակավայրի, տեղական ավանդույթների և բանահյուսության ուսումնասիրությունից, սկսած ընտանիքի, փոքր հայրենիքի և սեփական երկրի արժեքի ընկալմամբ: Երեխայի՝ հայրենիքի հանդեպ սիրո զգացումը պետք է լցվի անձնական հուզական փորձառություններով և կապերով: Ժամանակակից աշխարհում մեծ են տարբեր երկրների երիտասարդների հետ շփվելու, ծանոթանալու հնարավորությունները, սակայն համաշխարհային մշակույթը ուսումնասիրելով հանդերձ, միևնույն ժամանակ պետք է կարողանան պահպանել իրենց ազգային դիմագիծը՝ լինելով սեփական մշակույթը կրողը: Անհրաժեշտ է հպարտանալ սեփական երկրի պատմությամբ, ձեռքբերումներով, մշակույթով, լեզվով, ըմբռնել նրա ինքնության կարևորությունը:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի՝ ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը ներկայացվում է հետևյալ կերպ. «*Սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն»: [5]

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության նկարագրիչները

Գիտելիք՝

- ինքնաճանաչողություն և ինքնաքննադատական ընկալում
- լեզվի և հաղորդակցման միջոցների իմացություն և քննադատական ընկալում
- գիտելիքներ և աշխարհի քննադատական ընկալում. քաղաքականություն, օրենք, մարդու իրավունքներ, մշակույթ, կրոն, պատմություն, լրատվամիջոցներ, տնտեսություն, շրջակա միջավայր, կայուն զարգացում

Հմտություններ՝

- ինքնակրթվելու հմտություններ
- վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ
- լսելու և դիտարկելու հմտություններ
- ապրումակցում
- ճկունություն և հարմարվողականություն
- լեզվական, հաղորդակցման և տարբեր լեզուներ օգտագործելու հմտություններ
- համագործակցային հմտություններ
- հակամարտությունների կարգավորման հմտություններ

Դիրքորոշում/արժեք՝

- արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները
- արժևորել մշակութային բազմազանությունը
- արժևորել ժողովրդավարությունը, արդարադատությունը, արդարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը
- անկանխակալ վերաբերմունք այլ մշակույթների, համոզմունքների, աշխարհայացքների և սովորույթների հանդեպ
- հարգանք
- քաղաքացիական մտածողություն
- պատասխանատվություն
- ինքնակառավարման արդյունավետություն

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության զարգացմանն ուղղված բազմաթիվ վերջնարդյուքներից մեկի օրինակով ներկայացնենք, թե ինչպես են նույն նպատակին տանող վերջնարդյունքները տարբեր կրթական աստիճաններում ապահովում աստիճանական զարգացում:

Տարրական կրթական աստիճանում ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն ձևավորող

- **«Ճանաչի և հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները և ներկայացնի պետական և ավանդական տոների հիմնական բովանդակությունը».**

Վերջնարդյունքը հիմնական կրթական աստիճանի վերջնարդյունքում զարգանում է հետևյալ կերպ՝

- **«Կարողանա մասնակցել Հայաստանի հիմնախնդիրների քննարկմանը՝ օգտագործելով պատմության, բնության, բնակչության, պետության և տնտեսության մասին ունեցած համապատասխան գիտելիքները»,**

իսկ միջնակարգ կրթական աստիճանում՝

- **«Վերլուծի իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից արժևորի Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր»:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով կարողությունների ձևավորումը, դերն ու նշանակությունը սովորողների մոտ պատմության դասերին՝ կարող ենք եզրակացնել.

1. Կարողությունների վրա հիմնված մոտեցման դեպքում «Պատմություն» առարկան դիտվում է որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար: Ընդ որում, որպես կանոն, այդ որակներից (կարողություններից) յուրաքանչյուրը կարող է ձևավորվել մի քանի առարկաների ուսումնասիրության արդյունքում:

2. Կարողությունների վրա հիմնված մոտեցման դեպքում ուսումնական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ հնարավորինս նպաստի սովորողի այն գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքների ձևավորմանը, որոնց սովորողը առնչվում է իր առօրյա և ուսումնական գործունեությունը կազմակերպելիս:

3. Այս մոտեցումն առավել բարձր պահանջներ է առաջադրում ուսուցիչներին, քան թեմատիկ ուսուցման դեպքում:

4. Այս մոտեցման դեպքում, կրթության բովանդակությունը ձևավորվում է կարողությունների հենքի վրա, այլ ոչ թե առանձին առարկաների: Հաջողությունը պայմանավորված է կարողությունների, այլ ոչ թե առանձին առարկաների յուրացմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, հատոր 1, 93 էջ:
2. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, հատոր 2, 73 էջ:
3. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, հատոր 3, 131 էջ:
4. Համացանց-Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան:
5. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված է 09.02.2021թ. N136-Ն որոշմամբ:
6. Универсальные компетентности и новая грамотность: от лозунгов к реальности. М.: Изд. дом ВШЭ, 2020.